ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Երևանի Լեոյի անվան թիվ 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուղղագրական կարողությունների զարգացմանը միտված աշխատանքները հիմնական դպրոցում

Կատարող՝ Հրեղեն Մանուկյան

«Գյումրու տնտեսագիտական վարժարան» ՊՈԱԿ

դպրոց

Ղեկավար՝ բ. գ. թ, դոցենտ Աննա Յայլոյան

անուն, ազգանուն

ԳՅՈՒՄՐԻ - 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….3

1. Արդի հայերենի ուղղագրության սկզբունքները……..……4

2. Ձայնավորների ուսուցումը՝ տարբեր մեթոդների կիրառմամբ.....6

3. Օրվա դասի պլանի նմուշօրինակ.....13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր հետազոտական աշխատանքի նպատակը ուսուցման բազմազան ու բազմաբնույթ մեթոդների նպատակային կիրառումն է ուսուցման գործընթացում: Ուսուցչի աշխատանքը ստեղծագործական աշխատանք է և ցանկալի է, որ արդեն գոյություն ունեցող ուսուցման մեթոդների կողքին ուսուցիչը ստեղծի իր մեթոդները, որոնք կդյուրացնեն թեմայի ընկալումը սովորողների կողմից: Ժամանակակից մեթոդների իմացությամբ զինված, ստեղծագործաբար աշխատելու, ուսումնառությանն աջակցելու հմտություններով օժտված ուսուցչի համար օրվա հրամայական է դարձել ուսուցանվող նյութերի մատուցման, հաղորդման գործընթացի կատարելագործումը:

Թեման արդիական է, քանզի ժամանակակից հայոց լեզվի ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը և ուսուցման գործընթացի մատչելիության ապահովումը , դրան միտված մեթոդների ու հնարների ճիշտ ընտրությունը խիստ կարևոր են:

Մեր հետազոտական աշխատանքում կանդրադառնանք ժամանակակից հայոց լեզվի ձայնավորների ուղղագրությանը և ուղղախոսությանը, ուղղագրական կանոնների ուսուցման մեթոդաբանությանը, կներկայացնենք օրվա դասի պլանի մեր տարբերակը:

Սույն հետազոտական աշխատանքի խնդիրներն են.

1. ուսումնասիրել և հետազոտել ուսուցման ժամանակակից մեթոդները,
2. գտնել ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության ուսուցման համար առավել համապատասխան մեթոդներ,
3. անդրադառնալ ձայնավորների ուղղագրության և ուղղախոսության ուսուցման համար ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմանը,
4. առաջարկել թեմային համապատասխան վարժությունների համակարգ, դրանց կիրառումը զուգակցել ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառմանը:

1. Արդի հայերենի ուղղագրության սկզբունքները

«Ուղղագրություն» բառը երկու իմաստ ունի: Մի իմաստով՝ ուղղագրությունը բառերի, բառաձևերի, տարբեր մասնիկների (ածանցներ, վերջավորություններ, հոդեր) գրության ընդունված, պարտադիր համարվող կանոնների ամբողջությունն է (օրինակ՝ հայերենի ձայնավորների ուղղագրությունը): Մյուս իմաստով ուղղագրությունը լեզվի մասին գիտության բաժիններից մեկն է, որն ուսումնասիրում է ուղղագրական կանոնների համակարգը (օրինակ՝ հայերենի ուղղագրության պատմությունը):

ՈՒղղագրությունն ունի ինչպես տեսական այնպես էլ գործնական նպատակներ: Մի կողմից դա ուղղագրական կանոնների մշակումն է, մյուս կողմից՝ դրանց պահպանումն ու կիրառումը: Գրագիտության հիմքերից մեկը ուղղագրության կանոններին լիարժեք տիրապետելն է:

Գրության և արտասանության մասնակի անհամապատասխանության հետևանքով առաջ են գալիս ճիշտ գրելու և գրվածը ճիշտ կարդալու որոշ դժվարություններ: Դրանք հաղթահարելու համար սահմանված են գրության և արտասանության կանոններ:

Տարբեր մարդիկ բառերը կարող են արտասանել տարբեր կերպ, բայց կան արտասանական ընդհանուր կանոններ, որ պարտադիր են բոլորի համար: Դրանք ուղղախոսական կանոններն են: Հայերենի ուղղախոսությունը որպես ընդհանուր միտում ձգտում է նվազեցնելու գրության և արտասանության տարբերությունները հօգուտ գրության:

Ուղղագրությունը ճիշտ գրելու կանոնների ամբողջությունն է:

Կան ուղղագրության որոշակի սկզբունքներ՝ հնչյունական, պատմական կամ ավանդական, ձևաբանական, բառակազմական: Մաշտոցյան այբուբենը որդեգրել է հնչյունական սկզբունքը. յուրաքանչյուր հնչյունին համապատասխանում է մեկ տառ, այսինքն՝գրությունը համապատասխանում է արտասանությանը:

Պատմական կամ ավանդական սկզբունքն այն է, երբ գրում են՝ պահպանելով հին, ավանդական ուղղագրության կանոնները:

Հայ գրեր գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցը մշակեց ուղղագրական կանոններ՝ հիմնված հնչյունական սկզբունքի վրա: Ժամանակի ընթացքում սկսել է հաշվի առնվել բառի կազմությունը: Սա տևել է մինչև 9-րդ դարը: Իսկ երբ գրությունը աստիճանաբար հեռացել է արտասանությունից, դիմել են հին ուղղագրությանը, այսինքն՝ առաջնորդվել են ուղղագրության ավանդական սկզբունքով, որը որոշակի փոփոխություններով գործածել են մինչև 20-րդ դարի սկիզբ: Իսկ 1922 թվականից սկսած՝ վերադարձել են հնչյունական սկզբունքին՝ այբուբենից հանելով ւ և օ տառերը, միօրինականացնելով յ, վ, հ հնչյունների ուղղագրությունը (Մանուկ Աբեղյան): 1940 թվականին ընդունված որոշման համաձայն է և օ տառերը վերականգնվեցին, լսվող յ ձայնակապը գրվեց միայն ա և ո ձայնավորներից հետո:

2. Ձայնավորների ուսուցումը՝ տարբեր մեթոդների կիրառմամբ

Ուսուցման մեթոդ հասկացությունն իր մեջ ներառում է երեք խնդիր՝ ի՞նչ սովորեցնել (կրթության բովանդակություն), ինչո՞ւ սովորեցնել (կրթության նպատակներ), ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդիկա):

Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ է կիրառել որոշակի մեթոդներ, եղանակներ, ձևեր, հնարներ: Կան մի շարք գործոններ, որոնք ազդում են մեթոդների ընտրության վրա.

- ուսուցման նպատակները, խնդիրները, բովանդակությունը,
- ուսուցման նյութի քանակը և բարդությունը,
- սովորողների պատրաստվածության մակարդակը,
- ուսուցման կազմակերպման պայմանները,
- սովորողների տարիքային և անհատական առանձնահատ-կությունները,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակը:

Այս բաժնում կանդրադառնանք մեթոդների, որոնք կարելի է կիրառել ձայնավորների ուղղագրության ուսուցման, նյութի ամրակայման, արդեն ունեցած գիտելիքների ու կարողությունների ակտիվացման ժամանակ:

Ձայնավորների ուղղագրության ուսուցման ժամանակ կարելի է կիրառել «Գաղափարների քարտեզագրում» մեթոդը: Գաղափարների շուրջ քարտեզի կառուցումը արդյունավետ է այնքանով, որ նյութն ավելի լավ է ընկալվում և մտապահվում: Այս մեթոդի կիրառման ժամանակ ցանկալի է գործածել գունավոր գրիչներ:

Մեկ- երկու անգամ քարտեզ կառուցելուց հետո կհասկանանք, թե քարտեզագրման որ ձևն են ավելի լավ մտապահում սովորողները, արդեն կունենանք պայմանական նշանների մեր համակարգը:

Ստորև բերված է <u>Է-ե</u> ձայնավորների ուսուցման համար գաղափարների քարտեզագրման մի օրինակ:



Գաղափարների քարտեզագրում

Ուղղագրության ուսուցման ժամանակ բազմազան մեթոդներ ու հնարներ կարելի է կիրառել: Ուսուցիչը պետք է ամեն դասի ստեղծագործի և կիրառի արդեն գոյություն ունեցող մեթոդների հետ մեկտեղ նաև ինքնաստեղծ մեթոդներ և հնարներ:

Օրինակ օ-ո ձայնավորների ուղղագրության ուսուցման համար կարելի է կիրառել մի մեթոդ, որը փորձը ցույց է տվել, որ կհետաքրքրի և կակտիվացնի սովորողներին, կզարգացնի արագ մտածելու և ճիշտ կողմնորոշվելու կարողություն:

Գրատախտակին ամրացնում ենք երկու տարբեր գույների պարկ. մեկի վրա գրում ենք <u>օ</u>, մյուսի վրա՝ <u>ո</u>: Աշակերտներից մեկին կանչում ենք գրատախտակի մոտ և հանձնարարում նախապես պատրաստած արկղիկից հանել քարտեր, որոնցից յուրաքանչյուրի վրա գրված է մի բառ, որում բաց է թողնված օ կամ ո ձայնավորը: Սահմանում ենք հստակ ժամանակ և հանձնարարում աշակերտին տվյալ ժամանակահատվածում շատ արագ քարտերը գցել համապատասխան պարկերի մեջ: Ժամանակը լրանալուն պես աշխատանքը դադարեցվում է, հետո ստուգում ենք պարկերի պարունակությունը: Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտը գնահատվում է՝ հաշվի առնելով աշխատանքի արագությունը և ճիշտ կողմնորոշվելը:

Ուղղագրության ուսուցման ժամանակ կարելի է կիրառել ՏՀՏ տեխնոլոգիաները: Օրինակ՝ «LearningApps» լայն հնարավորություն է տալիս դասն ավելի հետաքրքիր ու բազմազան դարձնելու: Գաղտնիք չէ, որ աշակերտները մեծ հետաքրքրասիրություն են ցուցաբերում համակարգիչների և բջջային հեռախոսների նկատմամբ: Այդ պատճառով արդյունավետ կլինի աշակերտների սիրած զբաղմունքը զուգորդել դասի հետ: Այս ծրագրի մեթոդները արդյունավետ են և խաղերի են նման, որոնք կգրավեն սովորողներին:

Դիտարկենք այդ մեթոդներից մի քանիսը:

Խճանկար

Այս մեթոդներին պետք է նախապես պատրաստվել: Վերևում գրում ենք <u>օ,ռ,վռ,</u> իսկ խճանկարի մասերի վրա տարբեր բառեր, որոնց բաց թողնված տառերի փոխարեն պետք է տեղադրվի <u>օ, ռ</u> կամ <u>վռ</u>:



Սովորողները պետք է նշեն վերևի տառերից մեկը (որը նշելուց հետո կապույտ է դառնում), որից հետո այն բառերը, որոնցում բաց է թողնված նշված տառը: Նույն սկզբունքով պետք է նշել մյուս տառերը:



Եթե աշակերտն ամեն ինչ ճիշտ է արել, վերջում կբացվի կա'մ նախապես մեր կողմից բեռնած պատկեր, կա'մ մեր կողմից գրված արտահայտություն, օրինակ՝



Հաջորդ մեթոդը բոլորին հատնի «Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր» խաղի նման է:

Նշում ենք ձայնավորների ուղղագրության վերաբերյան հարց և չորս պատասխան. սովորողները պետք է նշեն ճիշտ պատասխանը: Հարցերի քանակն ինքներս ենք նշում և նախապես տալիս կարգավորումները: Օրինակ՝

Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր



Ո՞վ է ուզում դառնալ ամենախելացին



Եթե սովորողի ընտրած պատասխանը ճիշտ է, տարբերակի գույնը կդառնա կանաչ.



Հաջորդ մեթոդը կոչվում է «Գնահատեք».

Ձայնավորների ուղղագրության ուսուցման ժամանակ շատ արդյունավետ կարող է լինել այս մեթոդը: Կարելի է ցանկացած դասագրքից վարժություն նկարել և բեռնել, հետո հաշվելու հետ կապված հանձնարարություն տալ: Դասագրքերում շատ վարժություններ կան, որոնցում պահանջվում է լրացնել բաց թողնված տառերը: Օրինակ՝ է-ե ձայնավորների ուսուցման ժամանակ կարելի է բեռնել համապատասխան վարժության նկար և հարց տեղադրել, թե բառերից քանիսում է բաց թողնված է տառը:



Հանձնարարությունը կարելի է կատարել միայնակ և թիմով: Թիմով կատարելու դեպքում ընդհանուր էկրանին կգրվեն բոլոր մասնակիցների միավորները և կսկսվի ակտիվ մրցակցություն:



Այս բոլոր մեթոդները կարելի է կիրառել՝ համապատասխանեցնելով թեմաներին: Առավելություններից մեկն այն է, որ ամբողջ դասարանը միաժամանակ է աշխատում, և ոչ ոք ուսումնական գործընթացից դուրս չի մնում: Այս մեթոդների կիրառումը սովորողներին ակտիվացնում ու շահագրգռում է, զարգացնում է արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողություն, հնարավորություն է տալիս ուսուցչին խաղի միջոցով գիտելիքներ հաղորդելու, արդեն ունեցած գիտելիքներն ամրապնդելու:

3. Օրվա դասի պլանի նմուշօրինակ

Առարկան՝ հայոց լեզու

Դասի թեման ՝ «Ը ձայնավորի արտասանությունը և ուղղագրությունը»

Նպատակը՝ իմանա ը ձայնավորի արտասանության և ուղղագրության առանձնահատկությունները,

Դասի վերջնարդյունքը՝ կարողանա նմանություններ և տարբերություններ գտնել այլ

լեզուների ձայնավորների արտասանության և գրության հետ, ճանաչել տառի և հնչյունի տարբերությունը, գրության առանձնահատկությունները և ճիշտ կիրառի գրավոր խոսքում:

Ուսուցման մեթոդները՝ «Կարճ զրույց», «Փոխգործուն գրառումների համակարգ արդյունավետ կարդալու և մտածելու համար(ՓԳՀԱԿՄՀ)» :

Ուսումնական նյութերը՝ դասագիրք, ՓԳՀԱԿՄՀ-ի գծակարգ, թղթապաստառներ, գունավոր գրիչներ, նշաթղթեր:

Դասի կառուցվածքը՝ նոր նյութի յուրացման դաս:

Դասի ընթացքը

Հանգամանորեն ստուգում ենք տնային աշխատանքները, հարցնում ենք հին դասը, գնահատում և անցնում նոր նյութի հաղորդմանը:

Կիրառում ենք «Կարճ զրույցի» մեթոդը, հարցերի միջոցով վեր ենք հանում աշակերտների արդեն ունեցած գիտելիքները թեմայի մասին, խթանում, որ նրանց մեջ ձևավորվեն նոր գիտելիքներ՝ ինքնուրույն վերլուծությունների, դատողությունների, եզրահանգումների միջոցով: Յուրաքանչյուր հարցը տալուց հետո տալիս ենք կարճ ժամանակ մտածելու համար, չպատասխանելու դեպքում վերաձևակերպում ենք հարցը, հստակեցնում, օժանդակ հարցեր տալիս: Կիրառում ենք «Փոխգործուն գրառումների համակարգ արդյունավետ կարդալու և մտածելու համար(ՓԳՀԱԿՄՀ)» մեթոդը: Եթե մեթոդի կիրառումից հետո ունենանք ? (անհասկանալի է, շփոթեցնող) նշանը, անդրադառնում ենք տվյալ հարցերին, բացատրում, քննարկում և անցնում հաջորդ փուլին:

Սրանից հետո դասարանը բաժանում ենք չորս խմբի: Յուրաքանչյուր խումբ իր հանձնարարությունը պետք է ներկայացնի թղթապաստառով:

1-ին խումբ

Բառասկզբում ը ձայնավորը ո՞ր դեպքերում է գրվում:

2-րդ խումբ

Բառամիջում ը ձայնավորը ո՞ր դեպքերում է գրվում:

3-րդ խումբ

Բառավերջում ը ձայնավորը ո՞ր դեպքում է գրվում:

4-րդ խումբ

Ի՞նչ գիտեք գաղտնավանկի ը-ի մասին:

Աշխատանքն ավարտելուց հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր թղթապաստառը, քննարկում է կատարվում, անհրաժեշտության դեպքում ուղղումներ ենք անում: Հետո նույն խմբերին առաջադրանքներ ենք տալիս: Յուրաքանչյուր խմբին տալիս ենք մի նկար և հանձնարարում նկարագրել պատկերված տեսարանը՝ գործածելով ը պարունակող շատ բառեր:

Հանձնարարությունները կատարելուց հետո սովորողները կարդում են, կատարվում են շտկումներ, եթե կան, ապա գնահատում ենք՝ հիմնավորելով գնահատականները:

Հանձնարարում ենք տնային աշխատանք, բացատրում, կատարում անդրադարձ.

Ո՞ր հարցն էր ամենաբարդը:

Ի՞նչ բացահայտում արեցիք այս դասի ընթացքում:

Ի՞նչն եք լավ հասկացել, ի՞նչը՝ վատ:

Եզրակացություն

Սույն հետազոտական աշխատանքում անդրադարձանք աշխատանքը գրելու նպատակին, խնդիրներին, թեմայի արդիականությանը:

Առաջին մասում խոսեցինք արդի հայերենի ուղղագրության սկզբունքների մասին, երկրորդ մասում ներկայացրեցինք ժամանակակից հայոց լեզվի ձայնավորների ուսուցման ժամանակ կիրառելի մի քանի մեթոդներ, որոնք կհեշտացնեն ու ավելի հետաքրքիր կդարձնեն ուսումնառությունը: Երրորդ մասում ներկայացրեցինք օրվա դասի պլանի մեր առաջարկած տաբերակը, որը տարբեր մեթոդների կիրառմամբ ը ձայնավորի ուսուցման նմուշօրինակ է:

Որոշակի սկզբունքներ հաշվի առնելով ընտրված, ճիշտ և նպատակային ուսուցման մեթոդները կօգնեն ուսուցչին լուծել իր առջև դրված խնդիրները և հասնել նպատակին:

Հայերեն լեզուն որքան հնագույն և գեղեցիկ լեզուներից է, այնքան էլ յուրացման , ուղղագրական և քերականան առումով ամենաբարդերից մեկն է:Ժամանակակից ,ակտիվ մեթոդների օգնությամբ փորձում ենք լեզվի յուրացումը ավելի դյուրին և տպավորիչ դարձնել:

Այսօրվա աշակերտին ոչ միայն իմ կողմից դասավանդվող, այլ նաև մյուս առարկաների ուսուցման ժամանակ ևս, շատ տեղին է ակտիվ մեթոդներով դասապրոցեսի անցկացումը:Նրան պետք է ակտիվ ներգրավվածություն ունենան նոր նյութի մատուցման և յուրացման ժամանակ:

Եթե փորձեմ պատասխանել այն հարցին, թե ներկայացված մեթոդներից որն եմ ավելի արդյունավետ համարում, կպատասխանեմ, որ նրանք լրացնում կամ հաջորդում են մեկը մյուսին, և մրցակիցներ չեն: Մեկի միջոցով կանոններն են հեշտ մտապահում, մյուսի միջոցով ամրապնդում, երորրդների օգնությամբ էլ ամփոփում գիտելիքները, գնահատում դրանք:

Յուրաքանչյուր աշակերտի հետ անհատական աշխատանքներ տանելիս նկատում եմ, որ նրանցից յուրաքանչյուրը նյութը հասկացել և ընդունել է 1 կամ մի քանի մեթոդների զուգահեռ օգտագործման , կիրառման շնորհիվ:

Ի վերջո, ինչու՞ ենք փորձում մայրենի լեզուն՝ հայերենը գրագետ սովորել և սովորեցնել մեր ապագա սերունդներին: Մեր ինքնությունը մեր լեզվի, խոսքի, մշակույթի, նիստուկացի միջոցով ենք պահպանելու և զարգացնելու: Այսօրվա աշակերտը վաղվա ծնողն է, բժիշկը, ուսուցիչը, դիվանագետը: Կցանկանամ, որ

հասարակության գրագետ անդամներ դաստիարակենք և հպարտանանք նրանց ձեռքբերումներով

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուրջինյան Դ., Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 6, Երևան, 2012, «Էդիտ Պրինտ» հրատարակչություն, 242 էջ:
2. Եզեկյան Լ., Հայոց լեզու, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2005, էջ 52-57:
3. Խաչատրյան Ս., Ուսուցման արդյունավետ հնարներ, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ,Հայաստան, 2020, 120 էջ:
4. Ղարիբյան Ար., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1947, 164 էջ :
5. Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ., Հայոց լեզու 7, Երևան, «Աստղիկ գրատուն» հրատարակչություն, 176 էջ:
6. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980 թ., 564 էջ:
7. Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան, Հայոց լեզու, «Զանգակ» հրատարակչություն, 2012 թ., 860 էջ: